պետութեան օրով։ Երբ Ֆելիքս Ֆապրի 1484ին այցելեց հոս, ամբողջութեամբ իսլամական տան մը վերածուած էր ան, բայց միևնոյն ժամանակ կը նկատուէր Իւղաբերից տեղը. Ֆապրիին խօսքերն են. «Երբ Ս. Յակոբի վանքէն դուրս ելանք, փողոցի երկարութեամբ գնացինք և մեր ճամբուն վրայ գտանք մեծ քար մը։ Հին քրիստոնեաները այդ տեղը դրած էին այդ քարը, վասն զի այդ տեղւոյն վրայ երևցած էր Տէրը Իւղաբեր կանանց՝ երբ անոնք ետ կը դառնային գերեզմանէն. Տէրը ըսաւ անոնց «ողջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նորա և երկիրպագին նմա» (Մատթ. ԻԸ. 9)։ Հոն մենք ալ խոնարհեցանք և համբուրեցինք այն հողը՝ որուն վրայ Տէրը կոխած էր...։ Երբեմն չինուած էր հոն մեծ եկեղեցի մը, զոր Սարակինոսները քանդեցին, ինչպէս նաև ուրիշ եկեղեցիներ։ Այս քարին քովի ճանապարհը կը տանի դէպի Ս. Գերեզման. ուխտաւորք միշտ այս տեղէն կ'անցնին Գերեզման երթալու համար։ Ես ալ գրեթէ օրը վեց անգամ այս ճանապարհէն կ'անցնէի. ամէն անգամ որ կ'անցնէի նոյն քարը կը համբուրէի»։ Ցիշատակուած քարը երկար ժամանակ ճանապարհին վրայ չէ թողուած. մինչև 1517 թուականը, քիչ ժամանակ մ'ալ, մնացած է ճանապարհին վրայ։ Հարիւր տարի վերջ իսլամական «տունը» նկատուած է Իւղաբերից եկեղեցին, և նոյն տունը փողոցին վրայ ցցուած անկիւն մ'ունենալով ուխտաւորները կը համբուրէին զայն։ 1697ին Մոնտրել կ'ակնարկէ Տար Տիսին և կը յարէ թէ ան ի հնումն Իւղաբեր կանանց եկեղեցին եղած է. և հաւանական է որ ի սկզբան սինակոկ մը եղած ըլլայ։ Նոյն տանը կից կը գտնուի գերեզմանատեղի մը ուր կան մէկ քանի իսլամական տապանաքարեր, որոնց վրայ գիշեր ժամանակ կանթեղներ կը վառուին և կայ նաև փոքր աղօթատեղի մը»։

Տեղեկագրին խօսքերը շատ որոշ են. ճարտարապետական քննութեամբ, և յիշեալ ուղեգիրներու ծանօթագրութիւններէն կը հասկցուի թէ ակնարկուած տունը Իւղաբեր կանանց եկեղեցին եղած է արաբական տիրապետութենէն առաջ։ Նոյն տեղւոյն իբր ուխտատեղի գոյութիւնը կը հաստատուի նաև մեր ձեռքը գտնուած ուխտավայրերու երկու ցուցակներէն. մին՝ Ակիւրմանցի Նիկողայոս եպս.ի, որ Ֆիլիքս Ֆապրիէն մէկ տարի առաջ (1483ին) ուխտի եկած է և նոյն տեղը հետևեալ կերպով կը յիշատակէ իր ցուցակին մէջ. եւ երբ երթաս ի Ցարուրիւնն՝ դուռն